ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

- ք. Երևան, փ. Բուզանդ 1/3
- г. Ереван, ул. Бузанда 1/3
- 1/3 Buzand st., Yerevan
- www. expertise@env.am

Հեռ.(374 011) 220-218
Тел. (374 011) 220-218
Tel. (374 011) 220-218

ԲՄՓ-26/518

«23» 10 2024թ.

Լոռու մարզի
Փամբակ համայնքի ղեկավար
պարոն Սուրեն Կոստանդյանին

Հարգելի պարոն Կոստանդյան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/՝ 2024 թ. նոյեմբերի 8-ին՝ ժամը 12:00-ին Փամբակ համայնքի Բազում բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի կունենա «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Բազում բնակավայրի կրթահամալիրի («Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում կառուցվող) կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ՝ 2-րդ հանրային լսումը:

Խնդրում եմ աջակցել և ապահովել ազդակիր համայնքի և շահագրգիռ հանրության, համապատասխան մասնագետների մասնակցությունը հանրային լսմանը:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), Փամբակի համայնքապետարանի և նախաձեռնողի (առկայության դեպքում) պաշտոնական կայքերում: Տեղեկատվություն ստանալու և առաջարկություններ ներկայացնելու համար դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին (հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, էլ.փոստ՝ expertise@env.am):

Հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկություններն օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կտեղադրվեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

Տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ, գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյան 011 220-21 17